Partnership for Good Governance

Գործընկերություն հանուն լավ կառավարման

EUROPEAN UNION

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

Եվրոպական միության եւ Եվրոպայի խորհրդի միջեւ «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագրի շրջանակներում Հայաստանում իրականացվող ծրագրերի արդյունքները[1]

Ի՞նչ է «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագիրը

2014 թվականի ապրիլին Եվրոպական միությունը եւ Եվրոպայի խորհուրդը համաձայնել են ԵՄ Արեւելյան գործընկերության երկրների հետ իրականացնել թիրախային համագործակցության աշխատանքներ՝ այդ երկրներն ավելի սերտ հաղորդակից դարձնելու մարդու իրավունքների, ժողովրդավարության եւ օրենքի գերակայության ոլորտներում գործող եվրոպական չափանիշներին: «Գործընկերություն հանուն լավ կառավարման» ծրագրի շրջանակներում իրականացվող ծրագրերը հիմնականում ֆինանսավորվում են ԵՄ-ի, ինչպես նաեւ համաֆինանսավորվում ու իրականացվում են Եվրոպայի խորհրդի կողմից:

Ի հավելումն տասնչորս տարածաշրջանային ծրագրերի՝ **Հայաստանի համար գործում են երկրին ներհատուկ հինգ ծրագրեր**՝ 2,8 միլիոն եվրո ընդհանուր բյուջեով:

Առողջապահության եւ մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդումը Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում

Ծրագրի տեւողությունն է 2015 թվականի մարտ ամսից մինչեւ 2018 թվականի դեկտեմբեր ամիսը:

Ծրագիրն օգնել է պետական մարմիններին՝ բարելավելու օրենսդրական եւ ինստիտուցիոնալ շրջանակները՝ Կառավարության կողմից Հայեցակարգ ընդունելու եւ Հայեցակարգում տեղ գտած առաջարկությունների ու կարիքների գնահատման հաշվետվությունների հիման վրա առաջարկվող օրենսդրական փոփոխությունների ընդարձակ փաթեթ ներկայացնելու միջոցով: Ծրագրի աջակցությամբ Կառավարությունը հիմնել է «Քրեակատարողական բժշկության

[1] Նախկինում՝ որպես «Եվրոպայի խորհուրդ - Եվրոպական միություն» ծրագրային համագործակցության շրջանակ՝ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի Հանրապետության, Ուկրաինայի և Բելառուսի համար

կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությունը, որը կարեւորագույն նշանակություն ունի քրեակատարողական հիմնարկներում բուժանձնակազմի մասնագիտական անկախության ապահովման եւ մասնագիտական պատրաստվածության բարձրացման գործում: Հայաստանի տասնմեկ քրեակատարողական հիմնարկներում բուժմասերի նյութական պայմանները զգալիորեն բարելավվել են 230,000 եվրո արժողությամբ բժշկական սարքավորումների տրամադրմամբ: Քրեակատարողական հիմնարկների՝ մոտ 900 հոգուց բաղկացած անձնակազմը, այդ թվում՝ բժշկական եւ ոչ բժշկական անձնակազմն անցել են վերապատրաստում՝ դատապարտյալների առողջության եւ մարդու իրավունքների վերաբերյալ, ինչպես նաեւ ձեւավորվել է ազգային մասնագիտական վերապատրաստողների խումբ՝ քրեակատարողական հիմնարկի անձնակազմի անդամների շրջանում առողջապահական եւ բժշկական էթիկայի հետագա կատարելագործման համար:

Այս ծրագրի վերաբերյալ հիմնական տեղեկություններ պարունակող թերթիկը հասանելի է կայքէջում

Օժանդակություն Հայաստանում քրեական արդարադատության համակարգի բարեփոխումներին եւ պայքար վատ վերաբերմունքի ու անպատժելիության դեմ

Ծրագրի տեւողությունն է 2015 թվականի հուլիս ամսից մինչեւ 2018 թվականի դեկտեմբեր ամիսը:

Ցուցաբերվել է փորձագիտական աջակցություն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի եւ քրեական օրենսգրքի նախագծերը, ինչպես նաեւ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» օրենքը, «Սահմանադրական դատարանի մասին» օրենքը եւ «Դատախազության մասին» օրենքը մարդու իրավունքների եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով:՝ վատ վերաբերմունքի եւ անպատժելիության դեմ պայքարի վերաբերյալ դրույթները բարելավելու նպատակով: 650 քննիչներ եւ 112 քննիչների թեկնածուներ անցել են վերապատրաստում՝ մարդու իրավունքների թեմայով Ծրագրի աջակցությամբ մշակված ուսումնական պլանի շրջանակներում, ինչպես նաեւ ձեւավորվել է մասնագետներից կազմված խումբ՝ այդ ուսումնական պլանի առարկաները՝ Արդարադատության ակադեմիայում դասավանդելու նպատակով: Վերապատրաստումներից հետո իրականացված գնահատումը ցույց է տվել, որ Քննչական կոմիտեի քննիչների 85%-ը եւ Հատուկ քննչական ծառայության քննիչների 59%-ը ամենատարբեր դեպքեր քննելիս օգտագործել են վերապատրաստման նյութերը եւ կիրառել նոր հմտություններն ու գիտելիքները, իսկ Հատուկ քննչական ծառայության քննիչների 55%-ը օգտագործել են վերապատրաստման նյութերը եւ կիրառել նոր հմտություններն ու գիտելիքները խոշտանգման և վատ վերաբերմունքի մասով դեպքեր քննելիս: Ծրագիրը նպաստել է նաեւ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ինստիտուցիոնալ կարողությունների բարելավմանը եւ դրա անձնակազմի մասնագիտական պատրաստվածության բարձրացմանը:

Ծրագիրն օժանդակել է ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2012-2017 թվականների ռազմավարական ծրագրի իրականացմանը եւ նպաստել է դրանից բխող օրենսդրական բարեփոխումների իրականացման ընթացքին: Ծրագրի շրջանակներում մշակվել են Դատական օրենսգրքի, Քաղաքացիական դատավարության օրենսգրքի, Վարչական իրավախախտումների օրենսգրքի նախագծերը, ինչպես նաեւ Դատական օրենսգրքի նախագծից բխող մի շարք այլ իրավական ակտերի նախագծեր, այդ թվում Դատական դեպարտամենտում ծառայության մասին ՀՀ օրենքի և Հաշտարարության մասին ՀՀ օրենքի նախագծերը: Ծրագրի շրջանակներում մշակվել է նաև ՀՀ-ում Էլեկտրոնային դատարան համակարգի, ներդրման և գործարկման ճանապարհային քարտեզի նախագիծը:

► Այս ծրագրի վերաբերյալ հիմնական տեղեկություններ պարունակող թերթիկը հասանելի է կայքէջում

Բարեվարքության ամրապնդումը եւ կոռուպցիայի դեմ պայքարը Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում

Ծրագրի տեւողությունն է 2015 թվականի հունվար ամսից մինչեւ 2017 թվականի դեկտեմբեր ամիսը:

Ծրագիրը նպաստել է բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդմանը եւ կոռուպցիայի դեմ պայքարին, որի պայմաններում հիմնական ոլորտներից մեկն Ազգային հակակոռուպցիոն ռազմավարության 2015-2018 թվականների ծրագրով ճանաչվել է որպես «ռիսկային»: Ծրագրի օգնությամբ

Աջակցություն Հայաստանում դատական բարեփոխումների իրականացմանը

մշակվել է համապարփակ ինստիտուցիոնալ շրջանակ՝ էթիկայի տիպային կանոնագրքերի եւ ուղեկցող գործիքակազմի ներմուծմամբ՝ համալսարաններին իրենց բարեվարքության կանոնակարգերը մշակելու հարցում ուղղորդելու համար: Համալսարաններին տրամադրվել է գործնական ուղեցույց՝ էթիկայի կանոնագրքերը շրջանառելու, դասախոսական եւ վարչական անձնակազմին վերապատրաստելու, ինչպես նաեւ թափանցիկության ու հաշվետվողականության վերաբերյալ զեկույցներ նախապատրաստելու համար, որոնցով ներկայացվում են կառավարման գործելակերպեր եւ ընթացակարգեր:

► Այս ծրագրի վերաբերյալ հիմնական տեղեկություններ պարունակող թերթիկը հասանելի է կայքէջում

► Այս ծրագրի վերաբերյալ հիմնական տեղեկություններ պարունակող թերթիկը հասանելի է կայքէջում

Երկարաժամկետ ընտրական աջակցություն Հայաստանում ընտրությունների հետ առնչվող շահագրգիռ կողմերին

Ծրագրի տեւողությունն է 2015 թվականի հունվարից մինչեւ 2017 թվականի դեկտեմբեր ամիսը:

Վենետիկի հանձնաժողովը ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի հետ համագործակցությամբ Հայաստանին տրամադրել է իրավական եզրակացություններ՝ վերջինիս ընտրական օրենսդրության՝ Եվրոպական ընտրական չափանիշներին համապատասխանությունն ապահովելու նպատակով: Դրանք ներառում են եզրակացություններ՝ նոր Ընտրական օրենսգրքի, ինչպես նաեւ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի նոր նախագծի վերաբերյալ: Առաջարկությունների օգնությամբ անդրադարձ է կատարվել այնպիսի հիմնահարցերի, ինչպիսիք են ընտրողների նույնականացումը, ընտրական գործընթացի կառավարման անձնակազմի անկախությունը, ընտրություններում կանանց ներկայացվածությունը, ինչպես նաեւ կուսակցությունների գրանցումը:

Նոր Ընտրական օրենսգրքի (ընդունված՝ 2016 թվականին) կիրարկմանը զուգընթաց ծրագիրը նպաստել է ընտրական բողոքների եւ բողոքարկումների հետ կապված թերությունների նվազեցմանը՝ ընտրական հանձնաժողովների 108 անդամների, դատավորների, քաղաքացիական հասարակության եւ կուսակցությունների վստահված անձանց վերապատրաստում անցկացնելու միջոցով: Ծրագրի օգնությամբ բարձրացվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամների մասնագիտական պատրաստվածությունը՝ ընտրական գործընթացն ավելի արդյունավետ կառավարելու եւ ընտրողների հետ ավելի բաց ու ակտիվ հաղորդակցվելու նպատակով: Տարածքային ընտրական հանձնաժողովների ավելի քան 300 անդամներ անցել են վերապատրաստում՝ նոր Ընտրական օրենսգրքի եւ ընտրական գործընթացի կառավարման վերաբերյալ:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել ներպետական դիտորդների կարողությունների ավելացմանը եւ քաղաքական գործընթացներում կանանց ներկայացվածությանը: Ձեւավորվել է ներպետական դիտորդների ազգային ցանց, եւ ապահովվել է համակարգված շրջանակ՝ 2016 թվականից 2017 թվականն ընկած ընտրական ժամանակահատվածում ակտիվություն դրսեւորած քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար կարողությունների զարգացման մի շարք միջոցառումների համար: Ծրագրի շրջանակներում գործի են դրվել թվով 200, 250 եւ 150 ներպետական դիտորդներ՝ Գյումրիում եւ Վանաձորում անցկացված տեղական ընտրությունների ժամանակ (2016 թվականի հոկտեմբերի 2-ին), խորհրդարանական ընտրությունների ժամանակ (2017 թվականի ապրիլի 2-ին) եւ Երեւանի ավագանու ընտրությունների ժամանակ (2017 թվականի մայիսի 14-ին):

Հինգ մարզերից քաղաքական կյանքում ակտիվություն դրսեւորած մոտ 310 կանայք մասնակցել են վերապատրաստման տարածաշրջանային սեմինարների եւ հաճախել են կանանց առաջնորդության դպրոցներ՝ տեղական ընտրություններում նրանց մասնակցությունն ընդլայնելու նպատակով: Այդ կին թեկնածուներից մոտ 85-ն առաջադրվել են 2016 թվականի տեղական ընտրություններում, որոնցից ավելի քան 50-ը հաղթել են հիմնականում համայնքային ծառայության

խորհրդականի պաշտոնի համար ընտրություններում:

► Այս ծրագրի վերաբերյալ հիմնական տեղեկություններ պարունակող թերթիկը հասանելի է կայքէջում

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելե՛ք http://partnership-governance-eu.coe.int

Հետադարձ կապն ապահովող անձ՝ Նիկոլա Հաուսոն, հաղորդակցությունն ապահովող աշխատակից, +33 3 88 41 22 39

2018թ., սեպտեմբեր